ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների մասհանումների ծախսերի ծրագիր

Ծրագրի անվանումը	*ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ*
Մարզ	*ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*
Համայնքը /համայնքները	*Համայնքի անվանումը՝ Մեղրի համայնք*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*Մեղրի համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 385 կմ է, մարզկենտրոն Կապանից՝ 85 կմ:*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	*Մեղրի համայնքի բնակչությունը՝ 12919 մարդ*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	*Մեղրի համայնքի մարզադաշտը կառուցվել է 1960-1970 թթ. : Մարզադաշտը ունի 1 հա տարածք, դաշտի մակերեսը կազմում է 5000 մ^2 :* *Մարզադաշտի տարածքը գտնվում է մի կողմից քաղաքի բազմաբնակարան շենքերի հարևանությամբ, մյուս կողմից՝ Մեղրի քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի հարևանությամբ և հանդիսանում է Մեղրի քաղաքի միակ մարզադաշտը:* *Համայնքում գործում են ֆուտբոլի, կարատեի խմբակներ: Խմբակների սաների մարզումները, ինչպես նաև քաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտների ֆիզիկական պարապմունքները, սպորտային միջոցառումները իրականացվում են նշված մարզադաշտում:* *Ներկայումս Մեղրի համայնքի հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 1561 աշակերտներ և համայնքն ունի սպորտի զարգացման մեծ ներուժ:* *Մեղրի քաղաքի մարզադաշտի անբարեկարգ վիճակը խոչընդոտում է սպորտաձևերի լիարժեք զարգացմանը և բացօթյա մարզական միջոցառումների կազմակերպմանը:* *Ներկայիս մարզադաշտի անմխիթար վիճակը դարձել է համայնքի առաջնահերթություններից մեկը, որը շուտափույթ լուծում է պահանջում:* *Մարզադաշտի վերանորոգումը հնարավորություն կտա մարզային, հանրապետական, միջազգային մրցաշարերին մասնակցելու նպատակով նախապատրաստական մարզանքներ իրականացնել, ինչպես նաև համայնքում մասշտաբային մրցաշարեր կազմակերպել:* *Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են:*

Վերանորոգվող մարզադաշտը համայնքային սեփականություն է:
Հրատապությունից ելնելով ծրագրով նախատեսվում է վերանորոգել Մեղրի քաղաքի մարզադաշտը, որի ուսումնասիրությունից պարզվել է՝

Առկա խնդիրները.

- Մեղրի քաղաքի մարզադաշտի անբարեկարգ վիճակ
- Երիտասարդների ֆիզիկական ակտիվության, բացօթյա ժամանցի կազմակերպման սակավ հնարավորություններ
- Արտադպրոցական մարզական կրթության ոլորտում երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակ
- Համայնքում մարզային մրցումներ անցկացնելու, մարզական միջոցառումներ հյուրընկալելու պայմանների բացակայություն

Ծրագրի իրագործման արդյունքում հնարավոր կլինի հասնել վերոնշյալ խնդիրների լուծմանը և ծրագրի իրականացման նպատակներին, որոնք են՝

- Կվերանորոգվի Մեղրի քաղաքի մարզադաշտը, համայնքի արտաքին գրավչությունը կբարձրանա, Մեղրի համայնքը կունենա բարեկարգված ենթակառուցվածքներ և սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ
- Կզարգանան առկա սպորտաձևերը, կստեղծվեն նոր սպորտային խմբակներ՝ ուղղված այլ սպորտաձևերի տարածմանն ու զարգացմանը
- Կբարձրանա երիտասարդների ֆիզիկական դաստիարակության, առողջ ապրելակերպի մակարդակը
- Կստեղծվեն պայմաններ համայնքում սպորտային մեծ մրցումներ, մրցաշարեր, մշակութային մասշտաբային փառատոներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար

Ծրագրի ակնկալվող արդյունքները

Ծրագիրն ունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղվածություն, համահունչ է Մեղրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ռազմավարությանը, որով Մեղրի խոշորացված համայնքի կայուն և համաչափ զարգացման գրավականներից են մարզամշակութային կյանքի ակտիվացումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը, ինչպես նաև մարզական խմբակների և դրանցում ընդգրկված սաների թվաքանակի աճը:
Մարզադաշտի վիճակի բարելավումն ընդգրկված է 2024 թվականի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում:

	«Մեղրի քաղաքի մարզադաշտի վերանորոգում» ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները համապատասխանում են ՀՀ կառավարության կողմից 01.09.2022թ. սահմանված՝ «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» թիվ 1370-Ն որոշմանը: Դրանք են՝ • մշակույթ, սպորտ և երիտասարդության զբաղվածություն / մշակույթի տան, գրադարանների, թանգարանային շենքերի ու շինությունների, սպորտային նշանակության մարզական և խաղային հրապարակների, խաղադաշտերի կառուցում և վերանորոգում / Ծրագրի իրագործման ընթացքում և ավարտին կանխատեսվող ռիսկերն են՝ • ոչ բարենպաստ եղանակային պայմաններ
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	**Շահառուների քանակը:** ➢ Նախադպրոցական տարիքի 443 երեխաներ և դպրոցական տարիքի մոտ 1561 աշակերտներ ➢ Մեղրի համայնք այցելող զբոսաշրջիկներ
Ծրագրի ընդհանուր բյուջեն	Ծրագրերի ընդհանուր բյուջեն՝ 129.436,23 ՀՀ դրամ (100%)
Ծրագրի իրականացման տևողությունը	Տևողությունը՝ 01.01.2024թ. - 30.12.2025թ.
Հայտի լրացման ամսաթիվ	13 հունիսի 2023թ.

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Խ. Անդրեասյան
Հեռախոսահամարը՝ 077006600
էլեկտրոնային փոստը՝ meghricity@mail.ru

Համայնքի ղեկավար՝ Բ. Զաքարյան

Ա. Ս